

Հեղինակ մը կ'ըսէ . ռեյս աշխարհի մէջ
մարդ մը ծնած չէ տակաւին որ իր գործն
ալ միասին ծնած չըլլայց : Ամէն մարզու
համար Աստուած զործ մը սահմանած է :
Համ Թովման Քարլայի , Երանելի է այն
մարդը որ գտած է բռն իր գործը , կոչու-
մը , անիկա այլևս ուրիշ երանութիւն թող
չ'ակնկալէ աշխարհի վրայց : Շատ մը քրիս-
տոնիաներ այսօր ուզգափառ հուատք ու-
նին , բայց ապերջանիկ են , քանզի ծառա-
յութեան կեանքի նուիրուած չեն և իրենց
մէջ կը պակսի զոհաբերութեան այն ոզին՝
զոր ունէր Յիսուս երբ կ'ապրէր երկրի վրայ :

Ինչո՞ւ օրհնուեցաւ Ուուրբն Պօղոսի
կեանքը , և Աստուածոյ թագուարութեան
գործին մէջ աչքառու զործունէութիւն ցոյց
տուաւ : Անոր համար որ ստէպ ազօթելով
և իր կեանքին մէջ մտքի յափշտակութիւն-
ներ ու հոգեոր տեսիլներ (Բ. Կորնթ. ԺԲ.
1-6) ունենալով հանդիրձ՝ տարապայժան
նուիրում ալ ունեցաւ մարդոց ծառայելու
համար , և իր բարձրագոյն հաճոյքը մար-
դոց մէջ և մարդոց հետ ապրելու և անոնց
սպասաւորելու մէջ փնտուեց : Ժողովրդային
առածք կ'ըսէ . և է ծառայել քան թէ
ժանգոտիլո :

Ուրեմն Այլակերպութեան առնին մեզի
տուած պատգամն է , կեանքի առօրեայ
զքաղումներէն մերթ ընդ մերթ վեր բարձ-
րանալ . Աստուածոյ հետ առանձնութեան
մէջ ժամանակ անցնել , հոգեոր տեսիլներ
ունենալ ու ներշնչուիլ , բայց նոյն ատեն
չմոռնալ զործի աշխարհը , ծառայելու
պարտականութիւնը , և մեր նմանեաց բաշ-
րելաւութեան համար զոհելու ու զանուելու
քրիստոնէական կրօնի վսիմ պահանջները :
Այլ բառերով , այլակերպութեան լերան
օրհնութիւնները վայելելով հանգերձ , չի
մոռնալ նաև Գողգոթայի լերան պահանջած
զոհողութեան սկզբունքը :

ԳԲ. Ա. ՍՈՒՍՅԵՍԽՆ

Ֆրեզնո , Գալիֆ .



ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

•

Ա) - ՆԵՐԲՈՌՆԵՐ ԵՒ ՏԱԼԵՐ

Բայց , ի հարկէ , Նարեկացու տաղերի
լեզուի առանձնայատկութիւնները չեն պայ-
մանաւորում միայն ժողովրդական առրի
հարատութեամբ . այդ առանձնայատկու-
թիւններից ամենակարեսներից են նաև
այն նորամութութիւնները , որոնք արդիւնք
են իր՝ բանաստեղծի անհատականութեան
և որոնք ժողովրդականի հետ միասին նրա
լեզուին հաղորդում են արտակարգ փայլ
և նկարչական գունագեղութիւններիցաւ-
ցու անհատական լեզուաստեղծման ընորու-
գծերից յատկապէս պէտք է նշել բարդու-
թիւններով , այն էլ շատ գէպքում անսո-
վոր բարդութիւններով , նոր բառեր (զիա-
ւորապէս մակղիլներ) ստեղծելը . օրինակ՝
ծիծադախուտ , սիրաբողբոջ , օրինարէն , զե-
զաշիտակ , թիկնէթեկին , հոգիազգեստալ ,
շարժվարժենի , վեհինաճեմ , մաքրինաճեմ ,
ոգինատիպ , ցոփինընթաց , խիտասաղարթ ,
պտղինաւէտ , ծայթինասէտ , լիրինաթինդ ,
ահազնակոչկոճ , ստեղծնաշխտակ , փաղփի-
նատար , թեատրոնաթե : Սակայն Նարեկա-
ցու լեզուի և լեզուական ոճի մասին աշեիի
մանրամասն խօսք կը լինի և Մատեան ող-
բերգութեան պոէմի կապակցութեամբ :

Ժողովրդական բանակիւսութեան և
լեզուի հարստութիւնների օգտագործումով
Նարեկացին միանգամայն թարմ չունչ է
մացնում հայկական պոէլիտայի մէջ , բայց
նրա ստեղծագործութեան պոէտիկական
արժանիքները , որոնք միաժամանակ նո-
րութիւններ էին . չեն սահմանափակում
զրանով : Նարեկացին , հարիւրաւոր տարի-
ներ կանխելով եւրոպական լիրիկներին ,
ըմբռնեց . թէ որքան խօսոր նշանակութիւն
ունի բանաստեղծութեան գեղարուեստա-
կանութեան համար նաև . նրա երաժշտակա-
նութիւնը , և նա ստանաւորին՝ բովանդա-
կութեան համապատասխան երաժշտակա-
նութիւն հաղորդելու համար այնպիսի պոէ-

տիկարան նօրամուծութիւններ կատարեց . սրոնք մշտապէս կիրառելի են : Սյդ նօրամուծութիւններից ամենաաչքի ընկնողը բազաձայնների և ձայնաւորների հանգիտութեան (ալիսերացիտ և ասոնանո) այնպիսի վարպետ և համարձակ զործածութիւնն է , որ անգամ քանակորդ զարի սկզբի մեր խօսքի վարպետ բանաստեղծներից ոչ մէկը չի գերազանցել նրան : Ճիշդէ , նրանից առաջ շարականների հեղինակները կիրառում էին բազաձայնների և ձայնաւորների հանգիտութիւնը , բայց այդ նրանց մօտ հագուապէս և պատահական բնոյթ էր կրում ու մի առանձին սրակ չէր կազմում : Բրիւսովը հայ պոէզիային նույիրած իր յայտնի ուսումնասիրութեան մէջ գտնում է , որ Նարեկացին բանաստեղծութեան ձեան ձեւ հասցրեց բարձր կատարելիութեան սիրով մշակելով հնչիւնագրութիւնը շատ աւելի վաղ այն ժամանակաշրջանից , երբ դա սկսեց ծաղկել իրանական և արարական պոէտների ստեղծագործութիւններւմ :

Եւ իսկապէս , Նարեկացին մի առանձին սէր է ցուցարերել , մանաւանդ , նման բազաձայններով հարուստ բառերի կուտակմամբ երաժշտականութիւն առաջացնելու նկատմամբ : Սյդպիսի կուտակութեանը նրա լւագոյն տաղերում արհեստական , բանի ճիզվէլ չեն արուած և ինքնանդատակ չեն . զրանք բնաւ չեն թուլացնում կամ չեղում բովանդակութիւնը , այլ ընդհակառակը , լիովին համապատասխանում են բովանդակութեանը և գեղեցիկ կերպով բացայացում են այն՝ յաճախ առաջացնելով երաժշտական բնաձայնական պատկերներ : Օրինակները շատ շատ են , ահա ծննդեան հոչակաւոր տաղի սկիզբը .

Աչքը ծով ի ծով ծիծաղախիս
ծաւալանայր յառաւօտուն ...

Սյդ տողերում ընտրուած են այնպիսի բառեր , որոնց թողած լսողական տպաւութեան մէջ իշխում է «Ճ» բազաձայնը . նախ՝ շատ բնական և արամարանական են «աչքն» բառի վրայ զրուած «Ճով» մակղիբին՝ «Ճով» սկսուող մի բառին , յաջորդող ածիծաղախիտ ծաւալանայրը բառերը . իսկապէս որ պէտք է ծավը առաւօտեան ծիծաղախիտ ծաւալանայր , սա բնութեան

միանգամայն սեալ մի պատկեր է , որով ընթերցողի համար աչքերի գեղեցկութիւնը աւելի է կանկրետանում և տեսանելի դառնում : Բայց ածերով սկսուող բառերի նման զաւաւորութիւնը ունի և մի երկրորդ կողմ , այն տաշացնում է բնաձայնութիւն և սեղծում է նաեւ լսողական պատկեր . արգեօք այստեղ չի լսում առաւօտեան փայլում արեի չողերով ողողուած ծովի ծիծաղախիտ ջրերի մեզմ ծփանքը . . . : Բայց աձայնոյթների կլասիկ նմուշներ կտրելի է դանիև և ուշարդավառի տաղում :

Դուքան ողբեր հովին
ուղեղուկ դեմ արեգականն...
Դոււանն ապով լցեալ
ուղ ապով եւ օւր մարգարտով...

Միանգամայն բնական է , որ հավառւմ արեգակի գէմ շուշանը շողշողա , ինչպէս և լեհային քաղցր ու զով օդից լեցուի շող շաղով ու շար մարգարտով , բայց , միւս կողմից , այս առաստ «Ճ» երը արգեօք շուն արայայտում այն շրջիւնը , երբ վազորդեան զեփիւոը հարում է գոհար շուշանին :

Իսկ որքան ախորժալուր է յարութեան տաղի վերջում ճռնչալով շարժուող սալլի անիւների գլուխելու ձայնը , որի մէջ ըզգացում է նաև անուապտոյտի իրայատուկ սիթմը .

Եղի զայր ի զիլ սայլիկն ի զիլ
ի Մասեաց յաջ կողմանեն
սայլիկն ի զիլ զայր ի զիլ . . . (1)
եւ նունչալով զայր մտներ յերուսաղեմ . . . (2)

Նման ձայնական նկարչական մտայլացութեր իրականացնելուց բացի , Նարեկացին բազաձայնոյթը գործածում է ընդհանրապէս բանաստեղծութիւնը երաժշտականութեամբ համելի . լսելիքը շոյող դարձնելու նպատակով և լուագոյն տաղերում այդ երբեք չի վերածում ձայնախազութեան և ձեւկան վարպետութեան ցուցադրման ձգտման՝ ի վես բովանդակութեան հարսութեան : Սյդպիսի բազաձայնոյթներ անհամար քանակութեամբ սփոռուած են նրա տաղերում .

(1) Մատենագրութիւնք , էջ 474:

Կուսին ծնեալ ծոցոյն ծաղիկ...
Գորոնաքեր գորեանաւոր զելլեղելլով...
Հոգիազգեստեալ զեղն ի զինւոյն գոյն...
Այն նորտն նոն եր եւ նապուկ...
Վայր վեր անեջ վեր վայր ի վեր...

Նոյն իսկ երկու բազաձայն միաժամանակ.

Ի վեր ի վերալ վարսից...
Տերեւն տափիլ տուոլին...
Տափիլ եռաստոփչ բամբերգայնոյ տափիլ...

Ինչ վերաբերում է ձայնաւորների հանգիտութեան, պէտք է ասել, «որ թէպէտ ներեկացին տաղերում (քան ոլղբերգութեան մատեանում») համեմատաբար քիչ է ուշադրութիւն դարձրել զրա վրայ, բայց և այնպէս քիչ չեն նաև այդ բանի սքանչելի նմոյշները։ Նկատում է, «որ իրեւ կանոն նման բազաձայներով բառեր ընտրելիս, նարեկացին հաշուի է առնում նաև նոյն այդ բառերի նման ձայնաւորներով հարուստ լինելը, այնպէս որ շատ դէպքում բազաձայնոյթը և առձայնոյթը առաջանում են միաժամանակ, օրինակ».

Այդ սոս ու սօսախ ծառերդ...
Զօր զօրելինին զօրինահաս գունդ...
Նալի ամպէն ամպն արեգակնեն...
Մահ արքայանեմ ձորձածածուկ ծիածանին
զնացք...
Աննարիցն նար նարտապիտեալ...
Աննարիցն նար նարտապիտեալ...

Սա, ի հարկէ, ևս մի ապացոյց է նրա միծ վարպետութեան։ Բերուած նմոյշները ցոյց են տալիս, որ բանաստեղծը ձայնաւորների հանգիտութեան դէպքում՝ հանդէս չի բերել բազմազանութիւն։ Բայց սա չը պէտք է թերութիւն համարել, «որովհետեւ առձայնոյթները համարեայ բացառապէս «ո» և «ա» ձայնաւորներով կազմելը թերես ունի իր պատճառները։ Յատկապէս «ա» ձայնաւորի արտակարգ առատութեամբ առաջացրած երաժշտականութեամբ նարեկացին հաւանաբար ձգտել է վեր հանել իր տաղերի կենսուրախ էութիւնը՝ կեանքի լիամուռ չունչը և կեանքի արժէքաւորման աներեր, հաստատուն ու լաւատեսական արամագրութիւնը։

Նարեկացին բանաստեղծութիւնը երաժշտական զարձնելու առողջ ձգտումով՝

բնականաբար պէտք է միծ ուշադրութիւն դարձներ և սպազործեր ստանաւորի տարբեր չափերի ընձեռած սիթմական հարաւորութիւնները։ Եւ նա չբաւականանալով իր նախորդ բանաստեղծների զարձածած ստանաւորի չափերով, ինքը սկիզբ է զրել բաւական միծ թիւով նոր չափերի կիրառութեան, որոնք մի առ մի նշուած են Արեգեանի ո Հայոց լեզուի տաղաջնափութիւն նշանաւոր ուսումնասիրութեան մէջ։ Դրանք հետեւալներն են։

ա) Յամբական երկանգամ ութ վահկանի ստանաւոր (4—4—(2—2)—(2—2))։ սա համարւում է միր չափերի մէջ լաւագոյն ներից մէկը, որովհետեւ թէ պարզ և թէ բարզ ստքերի սիթմը զգալի է ու երկու քառավանկ անդամների միջն հատածը անպայման անկրաժեշտ չէ։ Ուստի վերին առտիճանի ձկուն է ու երաժշտական և այդ պատճառով շատ է սիրուել ու գործածուել հետագայ բանաստեղծների (Ծնորհալու, Ֆրիկի, Պէշիկթաշլեանի և շատ ուրիշների) կողմից։ Այս չափով է նարեկացին զրել իր ածննեան տաղերից մէկը («Եին աշոյ...») և «յայտնութեան» տաղը («Աւեալիս միծ խորհրդոյ»)։

Մաղիկ ծոցոյ / ծոց նայրենի,
Ամպոյ նըման / իշեալ երկնից ...

Սյա չափով ստանաւորը լրիւ երաժշտական լինելու համար առնոււազն ամէն տաղում պէտք է սիթմական երեք չեշտունենայ, իսկ յիշեալ տաղի տաղերի միծ մասը պահանջող չորս շեշտ էլ կանոնաւորապէս ունի։ Ուստանաւորի բնոյթը թոյլատրում է տողերի մէջ որոշ արուեստով քորեյամբերի զարձածութիւնը, պատահում է նաև, որ ամբողջ տաղը կազմում է երկու քորեյամբերից, զրանցից բանաստեղծութեամբ երաժշտութիւնը չի տուժում։ (Վերևում բերուած օրինակի առաջին տաղի երկրորդ հատածը կազմուած է քորեյամբերից)։

բ) Յամբական եռանգամ տասներեք վանկանի մէկ անապեստով ստանաւոր։ այս չափի բուն սինեմայով (4—4—5) բանաստեղծութիւններ հնում չեն գրուել, միայն նարեկացու մօտ հանդիպում են զրա երկրորդ ձեռով՝ 5—4—4 սինեմայով գրուած տաղեր, որոնց մէջ այսպիսով անապեստեան ստքը ընկնում է տողի առաջին մասի

մէջ՝ Այսպէս է, օրինակ՝ «Քառասնից» տառածնից սաղը:

Գունդի սուրբ վկայիցն ի սոսկալի պատերազմին...

գ) Անապեստեան երկանդամ տառնեմէկ գանկանի, սկզբի յամբով և ստանաւոր բարձրացող—ընկնող քողալոտ սիթմով (5-6=2-3 // 3-3): Այս չափով զրուած է նրա և եկեղեցու տաղը:

Երկիցն ի յերկիրս եւ երկիրս ի երկիցն...

դ) «Հայրենի կարգ» չափը, որը ժողովրդական ծագում ունի և որը անշափ սիրուելու ու գործածուելու է մեր միջնադարեան բանաստեղծների կողմից (Ծորհալի, Ֆրիկ, Մկրտիչ Նազար, Գրիգորիս Աղթամարցի, Նահապետ Քոչշակ և շատ ուրիշներ): «Հայրենի» սիխման է 2-3-2 // 3-2: Արեգեանը, որ զանազան սականներով այս չափի յատկութիւնները մանրամասնորեն հետազոտել է, գանում է, որ առ մեր ամենատոփմիկ երաժշտական յամբ անապեստեան ստանաւորներից մէկն է: Այս չափով են զրուած Նարեկացու օրինակ՝ սվարզագագութիւններու մէկը, որի համարեայ բոլոր տողերը ճշտութեամբ կազմուած են չափի պահանջի համաձայն յամբերի և անապեստների կանոնաւոր հաղորդականութիւններ:

Ես ձայն զառիւծուն ասեմ / որ գոյէ ի բառարելին...

Անել ձայնս որ ես լուայ, / սա խկէ զամուս որ ունիմ

Զամուրս իմ բակել կամի, / զերելոցն առնել զերելոված:

Դերեացն երանի ասեմ — / որ եղեն ի յան առիւծուն...⁽¹⁾

բ) Ագատ ստանաւորների տեսակից՝ պարզունեայ խառն (օրինակ՝ «Աչքն ծով ի ծով ...» տաղը), և զ) բարզունեայ խառն ստանաւորների (օրինակ՝ «Սալլին այն իջաները ...» տաղը) չափերը: Այս չափերի՝ Նարեկացու կողմից առաջին անգամ օգտագործուած լինելու հանգամանքը և հայրենի կարգութիւնան չափազանց յատկանշական են: Այդ բոլորը նմանապէս ապացու-

ցում են, որ, իրօք, բանաստեղծը իրեն վերածնութեան արտայայտիչ շատ խորը կապերով է կապուած եղել ժողովրդական ստեղծագործութեան հետ: չէ՞ որ հնաց պարզունեայ խառը ստանաւորով են յօրինուած մեր մեծ ազոյն ժաղավրդական գէպը՝ և Աստունցի Թափիթը և վիպաշկան ու քեարական շատ ուրիշ երգեր: Խառը ստանաւորի չափը պահանջում է, որ տարբեր տեսակի չափերի շարունակ փոփոխուող յաջորդութիւնը պատահական բնոյիթ չունենայ, համապատասխանի բանաստեղծութեան բովանդակութեան փոփոխութեան: Այս տեսակէտից մեր քնարերգութեան կլասիկ նմուշներից է Նարեկացու «Ասլին այն իջաները ...» (յարութեան) տաղը, որի մէջ սկզբում սալլի անշարժ զրութիւնը, ապա՝ շարժուելը զգացուում է չափի փոփոխութիւնից առաջացած ոիթմից:

Բանաստեղծութեան երաժշտականութեան մեծ զարգեան լինելով, Նարեկացին պոհտիկան բազմաթիւ այլ միջազների էլ է գիտում, այսպէս նա շատ է սիրում տուեալ տաղի իմաստի տեսակէտից կարեսը որոշ բառերի կամ տողերի կրկնութեամբ առաջանելի հաճելի երաժշտական ոիթմ, այնպէս, ինչպէս երաժշտական ստեղծագործութեան մէջ լիյամուիւի կրկնութիւնը լինի: Իրեն օրինակ բերենք նրա՝ ուրիշի անունով տպուած տաղերից մէկը ամբողջութեամբ:

Ուր յառաօսէ

Ուր յառաօսէ

Ճեմեալ իւր անծուկ ծագմամբ:

Մազման արեւելի

Մազման արեւելի

Անունն այն Արուեսակին:

Միքէ այն ի վայր

Միքէ այն ի վայր

Վայրի տուիլ տարօնեալ:

Կամ սիրոյ շշան առեալ տասեղի բոլորեալ(1):

Պոհտիկան արուեստի տեսակէտից բառական տարբեր պատկեր են ներկայացնում Նարեկացու այն տաղերը, որոնց բազմանդակութիւնը կազմում են ստուածարանական տեսական հարցերը: Դրանց

(1) ՀՍԱՌ Մատենադարանի Նշանագիր, էջ 470:

թէ՛ էռոթիւնը և թէ՛ արտայայտչական ձեզ շատ մութն է ու խրթին. մեծ գժուարութեամբ հետաւոր է միայն համականալ նոյն իսկ զործածած բառերի նշանակութիւնը և բովանդակութեան կապը: Եթէ երբեմն էլ բառերը սովորական են, միենոյն է, էլի ամբողջ բանաստեղծութեան իմաստը մնում է գժուարըմբանելի: Այս երեսիմը սովորաբար բացատրում է մի կողմից՝ օտար ազգեցութեամբ, միւս կողմից՝ բանաստեղծի՝ ստառուածային գաղանիքների քննութիւնը քօղարկուած թողնելու ձգտմամբ: Օրինակ՝ Համբարձման տաղերից մէկում այն միտքը, թէ Աստուած՝ բոլոր երեացող ու աներեսոյթ արարածների արարիչը, յաւետենական ու անժամանակ է, արտայայտուած է հետեւեալ կերպ:

Եին եին անիին ելանի եղակ եղելի՝
անեղիցն աներից յալիսեան
Անհաւ իմանի անիկ այժմու հասու.

Ծոցածագենի ծագումն ծիր մէտածուալ անիփոխ (1):

Քառ երեսյթին, բացի վերոյիշեալ պատճառաներից, Նարեկացին սովորական տոկմատիկ գաղափարները չեն ցանկացել սովորական-պաշտօնական գործած ձեհրով արտայայտել, ուստի քիչ թէ շատ նորութիւն բերած լինելու համար զիմել է խրթնաբանութեան: Ինչ էլ որ լինի, ուսւալ դէպքում հետաքրքրականն այն է, որ այդ խրթնաբանութիւնը գերազանցապէս կարող էր հաւանաբար արգիւնք լինել արարական ազգեցութեան, քանի որ արարական մտաշնութեան համաձայն բանաստեղծի համար այդ բանը համարում էր վարպետութեան նշան: (Ինչպէս յայտնի է, հետազայտմ այս տեսակէտը ամենածայրային կիրառման հասցեց Քրիզոր Մագիստրոսը:) Աւրեմն պէտք է եղբակացնել, որ արարական գրականութեան ազգեցութիւնը Նարեկացու վրայ աւելի բացատկան հետեւանքներ է ունեցել:

Այն տաղերում, որոնց մէջ աստուածաբանական գաղափարներ են արտայայտուած, բացի խրթնաբանութիւնից, Նարեկացին դիմում է ստանաւորի կառուցման ձեւական այնպիսի միջոցների, որոնք երաժշտակա-

նութեան և առհասարակ գեղարուհասականութեան տիսակէտից չեն կարող արժէքաւոր համարուել: Այսպէս՝ նա շատ է սիրում կրկնել տաղավերջի բառը յոջորդ տողի սկզբում.

Ի նոյն նորոյ նորինը նոյնը նիւր, Նիւր եականին ենն յանեից զոյ: Պոյըն յոչեից եղաւուեալ տիպ, Տիպ երանութեան ներենդունակ ներ: Ներ ներքովական նըւաստափակ իեւպ, Կերպ երամադին եւ ցուցանի ուլք... (1):

Բայց պէտք է տսել, որ չնայած նարեկացու նման մի քանի տաղերի տուանձն գեղարուեստական արժէք չունենալուն, այնուամենայնիւ զրանք էլ որոշ չափով հատաքրքրական են, թէկուզ իրուկ իրենց ձեռվ նորութիւններ մեր պոեզիայի պատմութեան մէջ:

Նարեկացու լաւագոյն տաղերը, հնի գէմ ուղղուած նրա ընդգվումները, սակած ագործական ուժեղ կամքի փայլուն արտայայտութիւններ են: Նարեկացին ուժգին հարուածներով ձեղքում է զարաւոր մասը միապալազութիւնը իր տաղերի պայծառ լոյսով: Բայց տաղերը, ի հարկէ, բաւական չէին: Բնականաբար պէտք է շուտով հրապարակ գար նրա ստեղծագործական ամբողջ թափի մեծագոյն արդիւնքը: Նարեկացին իր կեանքի վերջին տարիններին մարդկութեանը թողեց մի անկրկնելի երկ, իր ռլլատիստն ողբերգութեանը:

Մ. Մկրտիչյան

(Դարունակելի՝ 6)



(1) Մատենագրութիւնք, էջ 479:

(2) Մատենագրութիւնք, էջ 471 - 472: